

Հ Ո Վ Հ Ա Ր Ե Ս Զ Ա Ք Ա Ր Թ Մ Ը
Թ Ո Ւ Ր Ի Ա Վ Ե Տ Ի Ս Ց Ա Ղ Ն

ՀԱԹՈՑ ԼԵԶՈՒ

ՍՓյուռփի դպրոցների համար
(արևելահայերեն ուսուցմամբ)



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹԵՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2015

ՀՏԴ 373.167.1:811.19(075.3)
ԳՄԴ 81.2Հ 972
Ձ 431

Չափարյան Հ., Ավետիսյան Յ.

Ձ431 Հայոց լեզու 5: Սփյուռֆի դպրոցների համար /Հ. Չափարյան, Յ. Ավետիսյան.— Եր., «Ջանգակ» հրատ., 2015.— 144 էջ:

Սույն դասագիրքը նախատեսված է Սփյուռֆի հայկական այն դպրոցների համար, որտեղ ուսուցումն իրականացվում է արևելահայերենով: Սիրով կրնալունենք դասագրքի կատարելագործմանն ուղղված դիտողություններն ու առաջարկությունները:

Մեզ կարող եք գրել Երևան, Կոմիտասի 49/2 հասցեով կամ info@zangak.am էլեկտրոնային հասցեով:

ՀՏԴ 373.167.1:811.19(075.3)
ԳՄԴ 81.2Հ 972

Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Դաս 1

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ինչպես ամեն մի լեզու, հայերենն ունի միայն իրեն հատուկ հնչյունական համակարգ, որին գրավոր խոսքում համապատասխանում է մաշտոցյան կոչվող բնիկ հայկական գրային համակարգը:

Հնչյուն և տառ

Հնչյունները լեզվի նյութական նվազագույն միավորներն են:

Դրանք ինքնին նշանակություն չունեն, սակայն ծառայում են որպես միջոց իմաստակիր միավորներ, օրինակ՝ բառեր կազմելու համար: Այսպես՝ *Հայաստան* բառն արտաբերվում է ութ հնչյունների միջոցով՝ Հ, ա, յ, ա, ս, տ, ա, ն: Այս հնչյունները չենք կարող բաժանել ձայնային ավելի փոքր միավորների:

Տառերը հնչյունների պայմանական նշաններն են գրավոր խոսքում:

Հայերեն այբ բենի յուրաքանչյուր տառ նշանակում է մեկ հնչյուն, և յուրաքանչյուր հնչյուն արտահայտվում է մեկ տառով: Սակայն մի քանի հնչյունների և տառերի դեպքում այդ համապատասխանությունը խախտվում է:

Դրա հետևանքով առաջանում են ճիշտ գրելու և գրվածք ճիշտ կարդալու որոշ դժվարություններ: Դրանք հաղթահարելու համար սահմանված են գրության (ուղղագրական) և արտասանության (ուղղախոսական) կանոններ:

Վարժություններ

1. **ՔԱԳ** թողած տառերը լրացրե՛ք այնպես, որ յուրաքանչյուր դեպքում ստացվի ոչ պակաս, քան երկու նոր բառ.

ա) վա...ք, բար..., ...երան, հա...ել, եր..., հար..., ա...ատ, բա...ակ, կար..., հա...ուստ, երե..., պա...ել, ...յուղակ, ...ատակ

բ) հան..., շարժու..., հ...ում, երգա...ան, անգի..., հու...ական, ֆեր...ել, ան...ավ, ...երել, վա...ել, ծա...կել, մածու..., հա...ակ
Օրինակ՝ *գիր... □գիրգիրկ, գիրգ:*

2. Նժե՛ք, թե ֆանի հնչյուն և ֆանի տառ կա տրված բառերում.

ա) գնալ, բարև, երագ, տգալ, հարևան, հյուղակ, աշխարհ

բ) արև, հրաժեք, կարևոր, նկատել, կտրտել, մանրել, դուստրեր
Օրինակ՝ *նայել-5* տառ, *5* հնչյուն, *դուստր-5* տառ, *6* հնչյուն:

Ե-ի արտասանությունը և ուղղագրությունը

1. Բառակազմում արտասանվող **ը** հնչյունը գրվում է միայն *դ, մ, ն* բաղաձայններից առաջ, ինչպես՝ *ըղձալ, ըմբիժ, ըմպել, ընկեր, ընտանիք, ընդունակ* և այլն, ինչպես նաև *ըստ* բառում:

2. Գրվող *ք-ով* սկսվող բառերի ուղղագրությունը նույնությամբ պահպանվում է բաղադրյալ կազմությունների մեջ՝ *առընթեր, գահընկեց, դյուրընթեռնելի, թերըմբոնում, ինքնըստինքյան, խաղընկեր, համընկնել, հատընտիր, հյուրընկալ:*

3. Բառավերջում **ը** հնչյունը գրվում է, երբ արտասանվում է՝ *Հակորը, գիրքը, ինը, տասը, սառը, դառը, խառը, ինքը, ոչ մեկը, ամեն մեկը, ամենքը, մեկնումեկը, տեղնուտեղը, ընդհակառակը, ընդամենը* և այլն:

• ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բառամիջում հնչող, բայց չգրվող ը ունեցող բառերից ուղղագրական շփոթի տեղիք են տալիս հատկապես հետևյալները, ակնբախ, ակնդետ, ակնթարթ, անակնկալ, առնչվել, գույնզգույն, երկնչել, լուսնկա, կորնթարթ, հետգհետե, հոսնկայս, ձկնկիրթ, մթնկա, մթնճաղ:

Վարժություններ

3. Անհրաժեշտ տեղերում լրացրե՛ք **ը** տառը,

ա) ամենա...նդունակ, ան...նդհատ, մթ...նճաղ, առ...նթեր, ձ...նկնկիրթ, այլ...նտրանք, գործ...նկեր, լուս...նկա, գուգ...նթաց, ք...ր...նխկ, հյուր...նկալ, ձեռ...նտու, ճեպ...նթաց, չ...նդունել

բ) ան...նդմեջ, գործ...նթաց, չ...նխկոց, դյուր...նթունելի,

- երկ...նտրանք(խոչ...նդուտք մերթ...Նդմերթ, հւսմ...նթաց, թ...խկ, հւստ...նտիր, դաս...նկեր, ջ...նկնվել, վեր...Նձյուղվել
- զ) ակ...նթւսրթ, ամենա...նտիր, ան...մբոնելի, գույՆ...զգույն, ան...նդունակ, դւստ...նթաց, ինքնըստինքյան, մեջ...նդմեջ, դյուրընթեռնելի, հւսմ...Նկնել, ջ...ր...խկ, ջ...մբոնել
- դ) անակ...նկւսլ, անընդունելի, արագ...Նթաց, օր...նդմեջ, ջ...նդդիմանալ(առ...նչվել, խաղ...նկեր, ջ...նկնել, վեր...Նթաց, Նախ...Նտրել, հետ...զհետե, մակ...նթացություն, շ...ր...խկալ

ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱՇԽԱՐՀ

ԱՐԱՔՍ

Դրախտի սլարտեզի չորս մեծ գետերից մեկն է Արաքսը՝ Հայ աշխարհի, Հայկականության խորհրդանիշերից է՝ Նրանով են ներթնչվել Հայ գրողները՝ բանաստեղծները, երգաչանները, նկարիչների Նրա մասին ժողովրդական գրույցներ են Հյուսվել Հայոց մայր դետն է, ինչպես Վոլգան՝ ուսուցների, Դանգեսը Հնդկների, Նեղոսը եգիպտացիների Համար՝

Միտս էլ Արաքսը կյանք է սվել իր շրջապատին՝ տարածելով կանաչ Լւ գովություն՝ Հանախակի վարարում է, որի Համար կոչվել է «կամուրջներ չ՛հ անդուր ժող»՝

Արաքսի երկարությունը 1072 կմ է՝ Ակիդր է առնում Բյուրակների բարձրավանդակի աղբյուրներից՝ Կուր — Արաքսյան դաշտավայրում միախառնվում է Կուր գետին և թափվում Կասպից ծովը՝

Արաքսի ֆրեթը շատ սղմատ են՝ Նրանից ավելի սղմատ աշխարհում միայն Նեղոսն է՝

Արաքսի մեծ վտակներն են Ախուրյանը, Մեծամորը, Հրազդանը, Ագատը, Վեգին, Արփան, Որոտանը՝

Հումեացի նշանավոր բանաստեղծ Վիրգիլիոսը Արաքսը պսակերել է որպես Հայաստանի ու Հայ ժողովրդի ուժի, ազատաբաղձության ու բնրաստության խորհրդանիշ՝

Ռափայել Պատկանյանի «Արաքսի արտասուք» դարձել է Հայկական սիրված երգերից մեկը՝

Առաջադրանք

Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Արաքս գետի մասին և պատմիր դասընկերներիդ։

ՀԻՉՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունները

Մարդու արտաբերած հնչյունները արտաբերվող օդի տատանողական շարժման արդյունք են: Երբ ձայնավարերը թրթռում են, առաջանում է ձայն: Իսկ երբ բերանում առաջանում են օդի հոսանքը խոչընդոտող փակվածքներ կամ նեղվածքներ, առաջանում են տարբեր տեսակի աղմուկներ:

Հստ ձայնի և աղմուկի հարաբերության՝ ստացվում են **չորս կարգի** հնչյուններ,

- ա) մաքուր ձայնային հնչյուններ,
- բ) հնչյուններ, որոնց մեջ ձայնը գերակշռում է աղմուկին,
- գ) հնչյուններ, որոնց մեջ աղմուկն է գերակշռում ձայնի Նկատմամբ,
- դ) մաքուր աղմկային կամ անձայն հնչյուններ:

Առաջին խմբի հնչյունները **ձայնավորներն** են, մյուս երեք խմբերինը՝ **բաղաձայնները**: Հայերենի ձայնավոր հնչյունները **6**-ն են՝ *ա, է (ե), ը, ի, օ (ո), ու*: Բաղաձայն հնչյունները **30** են՝ *բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, հ, մ, յ, ե, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, ա, ղ, ք, ց, փ, ֆ, ք*:

Հստ ձայնի և աղմուկի պարունակության՝ ժամանակակից հայերենում բաղաձայնները լինում են **ձայնորդ** (*բ* խումբ), **ձայնեղ** (*գ* խումբ), **խուլ** (*դ* խումբ):

Դ խմբի հնչյուններն իրենց հերթին բաժանվում են երկու ենթախմբի՝ **պարզ խուլեր** և **ճնշեղ խուլեր** (կոչվում են ճնշեղ, քանի որ իրենց մեջ ուժեղ շունչ ունեն):

- Չայնորդ բաղաձայններ՝ լ, մ, ն, ռ, ռ, յ:*
- Չայնեղ բաղաձայններ՝ բ, գ, դ, ձ, ջ, վ, ղ, զ, և,*
- խուլ բաղաձայններ, այդ թվում՝*
- պարզ խուլեր՝ պ, կ, տ, ծ, հ, փ, խ, Ո, շ, հ,*
- ճնշեղ խուլեր՝ փ, ֆ, թ, ց, չ:*

Բ, գ, դ, պ, կ, տ, փ, ֆ, թ բաղաձայնները կոչվում են պայթականներ, իսկ *ձ, ջ, ծ, հ, ց* բաղաձայնները՝ պայթափականներ:

Դրանք, պատկանելով **3** տարբեր խմբերի, կազմում են եռաստիճան համակարգ.

Հովհաննես Զաֆարյան
Յուրի Ավետիսյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ 5

Սիյուսի դպրոցների համար
(արևելահայերեն ուսուցմամբ)

Հրատարակչության տնօրեն
Գեղարվեստական խմբագիր
Էջաղրումբ
Վերստուգող սրբագրիչ

Էմին Մկրտչյան
Արա Բաղդասարյան
Առոտ Բազրատյանի
Նվարդ Փարսադանյան

Տպագրությունը օֆսեր: Զաֆար 70x100/16:
Թուղթը օֆսեր: Մավալը 9 սպ. մամուլ:

X
ԶԱՆԳԱԿ

ՀՐԱՏԱՐԱՎՅՈՒՆԻ ԳՐԱԿԱՆԱԳՐԱԿԱՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ. (+37410) 23-25-28
Հեռագրասենյակ (+37410) 23-25-95, էլ. փոստ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am